

2012-2016

ՀՊՏՀ

Հաստատված է
ՀՊՏՀ խորհրդի 2011 թվականի
ապրիլի 26-ի N 3 նիստի որոշմամբ

**Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարանի
2012–2016 թթ. զարգացման
ռազմավարական ծրագիր**

Ժամանակակից աշխարհի ժողովրդագրական, տեխնոլոգիական, սոցիալական, տնտեսական և մշակութային փոփոխությունները մեծ մարտահրավերներ են առաջադրում համալսարաններին: Այդ մարտահրավերներին դիմագրավելու, դրանք առաջընթացի հզոր գործոնի վերածելու նպատակով Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի արտաքին և ներքին մրցունակության բարձրացման հիմնական բաղադրիչների՝ վարչական, ուսումնական գործընթացի և ֆինանսական կառավարման համակարգերի ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել լայնածավալ փոփոխություններ:

ՀՊՏՀ-ը վերաբաժնորում է նաև իր հանրային պատասխանատվությունը և համագործակցության ընդլայնումը շահակիցների հետ:

Կրթության զարգացման նոր փուլը պայմանավորված է նաև կրթության հարացույցի փոփոխությամբ՝ «դասախոսակենտրոն» համակարգից դեպի «ուսանողակենտրոն» համակարգ անցումով:

ՀՊՏՀ-ի կայուն զարգացումն ապահովելու նախապայմաններից է հայեցակարգային փաստաթղթերի՝ ռազմավարական ծրագրերի մշակումը: Մասնավորապես՝ վերաձևակերպվել են ՀՊՏՀ տեսլականը և առաքելությունը: ՀՊՏՀ առաքելությունը վերաձևակերպելիս հաշվի են առնվել ներքին և արտաքին միջավայրային գործոնների ազդեցությունները, մասնավորապես՝ կրթության միջազգային փորձը, այդ թվում՝ Բոլոնիայի գործընթացի հիմնական ուղղությունները:

ՀՊՏՀ առաքելության նորովի ըմբռնումը հիմնված է համալսարանի նախատեսվող և արդեն իսկ իրականացվող նոր գործառնությունների և կրթահամակարգի զարգացման օրինաչափությունների բովանդակ վերլուծության վրա:

Արդ, ՀՊՏՀ առաքելության հիմնադրույթներն են՝ ապահովել և զարգացնել շրջանավարտների ծառայողունակությունը, համալսարանի ուսումնական գործընթացի, վարչական, ֆինանսական և այլ ծառայությունների արդյունավետ կառավարումը, մրցունակությունը և

միջազգայնացումը, կրթության որակը և մատչելիությունը, գիտահետազոտական աշխատանքների հիմնարարությունը, կիրառականացումը և առևտրայնացումը:

ՀՊՏՀ գործունեության արդյունավետության բարձրացման, կրթության որակի և մրցունակության բարելավման ջանքերը 2011 թվականից առաջնորդվում են «Մենք փոխվում ենք» կարգախոսով:

ՀՊՏՀ տեսլականն է.

Մինչև 2018 թվականը ՀՊՏՀ-ը կդառնա հիմնարար և, միաժամանակ, կիրառական գիտելիք ու կարողություններ տրամադրող, լայնածավալ հետազոտություններ իրականացնող հայաստանյան ամենամրցունակ տնտեսագիտական բարձրագույն ուսումնական հաստատությունը:

ՀՊՏՀ առաքելությունն է.

ՀՊՏՀ-ն, հիմնվելով ակադեմիական ազատությունների և ինքնավարության, ուսանողակենտրոն ուսումնառության, կրթություն-աշխատաշուկա համագործակցության, կիրառական գիտելիքի փոխանցման և գիտահետազոտական աշխատանքների վրա՝ մասնագիտական ներուժի կենտրոնացման, ուսուցանման և ուսումնառության նորարարական միջավայրի ստեղծման և առաջընթաց հետազոտական աշխատանքների իրականացման միջոցով պատրաստում է մրցունակ, մասնագիտական և ընդհանրական գիտելիքով, հմտություններով և կարողություններով զինված և ժողովրդավարական քաղաքացիության սկզբունքներով առաջնորդվող մասնագետներ, վերապատրաստում է հասարակության և տնտեսության փոփոխություններն իրականացնող առաջնորդներ ինչպես Հայաստանի, այնպես էլ միջազգային աշխատաշուկայում:

ՀՊՏՀ տեսլականի և առաքելության իրականացման մեխանիզմը գերազանցության կենտրոնների ստեղծմամբ փոփոխությունների աստիճանական ներդրումն է:

Առաջնորդվելով ՀՊՏՀ վերաձևակերպված տեսլականով և առաքելությամբ՝ 2012-2016 թվականների համար ՀՊՏՀ-ն սահմանել է զարգացման հետևյալ ինը ուղղությունները.

1. Կրթական գործունեություն,
2. Գիտական գործունեություն,
3. Տեղեկատվայնացում,
4. Միջազգային գործունեություն,
5. Ուսանողների դաստիարակչական աշխատանք,
6. Կադրային քաղաքականություն,
7. Համալսարանի կառավարում,
8. Ֆինանսատնտեսական գործունեություն,
9. Տնտեսական գործունեություն և նյութատեխնիկական հենք:

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ռազմավարական նպատակները

Տնտեսագիտության բնագավառում մասնագետների պատրաստման առաջատար տարածաշրջանային դիրքերի գրավում մասնագիտական կրթության համակարգի կատարելագործման ճանապարհով, կրթության մեջ տեղեկատվական նոր տեխնոլոգիաների ներդրման և կրթական գործընթացի ու գիտական հետազոտությունների ինտեգրման ուժեղացման, ինչպես նաև իրենց աշխատանքային գործունեության ընթացքում ժամանակակից տեղեկատվական և հեռահաղորդակցային տեխնոլոգիաների կիրառմամբ մասնագետների բազմակարգակ մասնագիտական անընդհատ կրթության համակարգի զարգացման շնորհիվ:

ՀՊՏՀ դիրքերի ամրապնդումը որպես տնտեսագիտության բնագավառում տարածաշրջանային բանիմացության կենտրոնի, ազգային գիտակրթական կենտրոնի կարգավիճակի ձեռքբերում:

Տնտեսագիտական գիտելիքների զարգացման և մրցունակ երկրի տնտեսության զարգացման խնդիրները լուծելու ունակ մասնագետների պատրաստմանը նպաստող նորաստեղծական միջավայրի աջակցություն և զարգացում:

Ռազմավարական խնդիրները

Կրթության բովանդակության նորացում և կատարելագործում՝ պատրաստման հիմնարարությամբ, ուսումնական գործընթացի և գիտական հետազոտությունների միավորմամբ:

Իրացվող կրթական ծրագրերի ընդլայնում: Մասնագետների պայմանագրային պատրաստման նախաձեռնում և ընդլայնում:

Երկրի զարգացման ծրագրերի կադրային ապահովմանը համալսարանի ակտիվ մասնակցություն:

Նորաստեղծությունների իրացման գործընթացում պետական և մասնավոր հատվածների հետ համագործակցության և նրանց շահե-

րով պայմանավորված հետազոտությունների հիման վրա ուսանողների ուսուցման զարգացում:

Տնտեսագիտության և կառավարման բնագավառում մասնագետների պատրաստման որակի բարձրացման համար նորաստեղծական կրթական մեթոդաբանության և ուսումնամեթոդական ապահովման մշակում և իրացում՝ բիզնես գործընթացների մոդելավորման և վերակառուցքավորման ժամանակակից մեթոդների օգտագործմամբ.

- նախաբուհական պատրաստում (հենքային ավագ դպրոցների և քոլեջների հետ),
- հենքային բարձրագույն կրթություն (բակալավրներ, մագիստրանտներ),
- հետբուհական կրթություն (ասպիրանտուրա, դոկտորանտուրա),
- լրացուցիչ կրթություն (երկրորդ բարձրագույն կրթություն, որակավորման բարձրացում և մասնագիտական վերապատրաստում, լրացուցիչ որակավորում),
- պետական կառավարման մարմինների և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերի իրականացում,
- ուսանողների ինքնուրույն աշխատանքի դերի ուժեղացում,
- ուսանողների գիտելիքների որակի վերահսկողության կատարելագործում ուսումնառության բոլոր փուլերում,
- ուսումնական պլաններում մինչ այժմ նորմ համարվող լսարանային ժամերի կրճատում:

Մեղիակենտրոնի և տեղեկատվական հաղորդակցային ցանցի օգտագործում համաշխարհային տեղեկատվական միջավայրին ուսանողների և դասախոսների լիարժեք մատչելիության, ինչպես նաև տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաների վրա հիմնված ավտոմատացված և ուսուցանող համակարգերի ներդրման համար:

Հեռահար ուսուցման ներդրում միջբուհական մեղիակենտրոնի ռեսուրսների և գիտական գրադարանի օգտագործմամբ, այդ թվում՝ կրթական լրացուցիչ ծառայությունների իրացման գործում:

Համալսարանում կրթության որակի կառավարման համակարգի ներդրում: Կրթական ծրագրերի որակի ներքին և արտաքին կանոնավոր աուդիտի անցկացման ապահովում:

Պետական կառավարման և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ համատեղ տնտեսագետ կադրերի պահանջարկի մշտադիտարկման կազմակերպում մասնագետների պատրաստման և վերապատրաստման ուղղությունների և մակարդակների բացահայտման, մասնագիտությունների ցուցակի ընդլայնման համար: Հանրապետության պետական և մասնավոր գործատուների հետ տնական գործընկերային հարաբերությունների հաստատում:

Հայաստանի համալսարանների հետ, ամենից առաջ՝ տնտեսագետ մասնագետներ պատրաստող, գործակցության ընդլայնում:

Կրթական ծառայությունների շուկայում Հայաստանի դիրքերի ամրապնդում՝ բարձրագույն մասնագիտական կրթության կրթական ծրագրերի կատարելագործմամբ, դրանց միջազգային հավատարմագրմամբ: Դասախոսների, ուսանողների, ասպիրանտների ակադեմիական շարժունության բարձրացում՝ միջազգային փոխանակումների ընդլայնմամբ: Ուսանողներին օտար լեզուների ուսուցման ավելի լայն հնարավորությունների ընձեռում:

Կրթական գործընթացի տեղեկատվական ապահովման ինտենսիվ զարգացում, ուսումնական և գիտական ժամանակակից գրականությամբ, ինչպես նաև էլեկտրոնային ռեսուրսներով լրիվ ապահովվածության ձեռքբերում՝ շնորհիվ մեդիակենտրոնի, տեղեկատվական-հեռահաղորդակցային ցանցի և համաշխարհային մշակութային արժեքների հիմնապաշարների օգտագործման:

Համալսարանի կրթական գործընթացի կադրային ապահովման արդյունավետ համակարգի ստեղծում: Ուսումնական բեռնվածության և աշխատանքի վարձատրության համակարգի կատարելագործում՝ ուսումնական գործընթացի օպտիմալացմամբ՝ ըստ «որակ-ծախսեր» չափանիշի, ստորաբաժանումների կրթական գործունեության ֆինանսավորման նոր մեխանիզմների ներդրում:

ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ռազմավարական նպատակները

Մասնագետների պատրաստման որակի բարձրացման համար համալսարանի գիտական ներուժի առավելագույն օգտագործում:

Համալսարանի գիտական գործունեության մրցունակության պահանջվածության ապահովում:

Համալսարանի գիտնականների ինտեգրում համաշխարհային գիտական հանրության մեջ:

Համալսարանի գիտական գործունեության վերածում ՀՀ նորաստեղծական տնտեսական գործոնի:

Գիտական հետազոտությունների ինքնաձախսաձածկման ապահովում, աշխատակիցների բարեկեցության բարձրացում և համալսարանի նյութական հենքի զարգացում:

Ռազմավարական խնդիրները

Մասնագետների պատրաստման բոլոր փուլերում գիտական հետազոտությունների միջոցով ուսուցման սկզբունքի կիրառում:

Համալսարանի գիտական դպրոցների ձևավորում, նրանց նյութական հենքի ամրապնդում: Ստեղծագործական կապերի ամրապնդում, համագործակցություն ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, հայրենական և արտերկրի գիտական կենտրոնների հետ:

Համալսարանի ակտիվ մասնակցությունը հանրապետական նշանակության ծրագրերի իրականացմանը:

Գիտական հետազոտություններում դասախոսների, ասպիրանտների և ուսանողների մասնակցությունը խթանող մեխանիզմների մշակում և գործադրում:

Ասպիրանտների և դոկտորանտների թվաքանակի մեծացում, ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի աշխատանքի արդյունավետության բարձրացում:

Գիտական հետազոտությունների մշտադիտարկման արդյունքների գնահատման համակարգի ներդրում: Գիտահետազոտական

փորձարկումների տվյալների շտեմարանի ստեղծում և պահպանում, տվյալների շտեմարանի հեռահար մուտքի ապահովում, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ստեղծում:

Համալսարանում գիտական հետազոտությունների զարգացման համար բոլոր մակարդակների բյուջեներից, հիմնադրամներից, ընկերություններից և մասնավոր ներդրողներից միջոցների ներգրավման ակտիվացում:

Գիտական հետազոտությունների մեծ մասի արդյունքների առևտրայնացում:

Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության և տեղեկատվական անվտանգության մեխանիզմների ներդրում:

Համալսարանի նորաստեղծական ենթակառուցվածքի զարգացում (բիզնես ինկուբատորներ, տեխնոլոգիաների փոխանցման կենտրոն, ՓՄՁ զարգացման ուսումնական կենտրոն) և դրա ինտեգրում ՀՀ տնտեսական և կրթական տարածությունում:

Ուսանողական նորաստեղծական գործունեության համար ենթակառուցվածքի ստեղծում:

Գիտության և կրթության բնագավառում նորաստեղծական գործունեության նորմատիվաիրավական հենքի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակում:

ՏԵՂԵԿԱՏՎԱՅԻՆ ԱՅՆԱՑՈՒՄ

Ռազմավարական նպատակները

Համալսարանի զարգացումը՝ որպես տարածաշրջանի գիտական և կրթական համաշխարհային տեղեկատվական տարածությունում ինտեգրված տեղեկատվական հաղորդակցային միասնական կենտրոն:

Կրթական և գիտական գործունեության նոր որակի ձեռքբերում՝ շնորհիվ տեղեկատվական և հեռահաղորդակցային նորաստեղծությունների:

Ռազմավարական խնդիրները

Համալսարանի կորպորատիվ տեղեկատվական ցանցի ստեղծում և համակարգում՝ հեռահաղորդակցությունների ներդրման և ակտիվ օգտագործման նպատակով:

Ինտերնետ մուտքի արտաքին կապերի ընդլայնում, համալսարանի նորաստեղծական գոտու սուբյեկտների միջև տվյալների փոխանցման բարձր արագության ապահովում:

Կրթական գործունեության և գիտական հետազոտությունների համար միասնական ինտեգրված համակարգչային, ծրագրային և հեռահաղորդակցային միջավայրի աջակցություն և զարգացում:

Էլեկտրոնային կրթական հավելվածների հավաստագրում՝ համաշխարհային ստանդարտներին համապատասխան:

Գիտակրթական միջավայրի տեխնիկական միջոցների պարբերական նորացում և ծրագրային-տեղեկատվական հագեցում:

Արտոնագրված ծրագրային հանդերձավորման ձեռքբերում և օգտագործում: Տեղեկատվական և հեռահաղորդակցային տեխնոլոգիաների հիման վրա համալսարանի կառավարման ինտեգրված ավտոմատ համակարգի մշակում և ներդրում: Բյուջետային և արտաբյուջետային միջոցների հաշվին համալսարանում տեղեկատվայնացման աշխատանքների նյութական և ֆինանսական ապահովում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ռազմավարական նպատակները

Միջազգային ասպարեզում համալսարանի՝ որպես տնտեսագիտության բնագավառում ազգային և տարածաշրջանային առաջադեմ գիտակրթական կենտրոնի համբավի ստեղծում:

Մրցունակ գիտական արտադրանքի և կրթական տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ համալսարանի զարգացման համար օտարերկրյա կապիտալի ներգրավում:

Ռազմավարական խնդիրներ

Համալսարանի կրթական, գիտական և նորաստեղծական գործունեության նվաճումների միջազգային ներկայացման ակտիվացում, գիտական, կրթական և մեթոդաբանական հիմնախնդիրներին նվիրված ինտերնետ կոնֆերանսներին մասնակցություն:

Ուսանողների, ասպիրանտների և դասախոսների լեզվական պատրաստվածության բնագավառում համալսարանի հեռահար քաղաքականության ձևավորում և իրականացում (շարունակական և լրացուցիչ կրթության կենտրոնում ուսանողների, ասպիրանտների և դասախոսների՝ օտար լեզուների խորացված ուսուցման կազմակերպում, ուսումնական բոլոր տեսակի պարապմունքներում օտար լեզուների կիրառման խթանում):

Առաջատար արտերկրի կրթական և գիտական կենտրոնների հետ գործընկերային կապերի զարգացում՝ միջազգային ծրագրերում և նախագծերում մասնակցությամբ, ինչպես նաև ուսանողների, ասպիրանտների և դասախոսների ակադեմիական փոխանակման ճանապարհով:

Համալսարանի մեդիակենտրոնի հնարավորությունների օգտագործում՝ համաշխարհային կրթական տարածության մուտք գործելու համար:

Միջազգային ակադեմիական փոխանակության ընդլայնում՝

- հեռահար ուսուցման ուսումնամեթոդական հենքի ստեղծմամբ,
- մասնագիտացված ծրագրային և սարքային ապահովմամբ,
- մուլտիմեդիայի միջոցների և գիտելիքների վերահսկողության միջոցների կիրառմամբ,
- հեռահար ուսուցման արտոնագրերի ստացմամբ:

Կրթական միջազգային միջավայրի մշտադիտարկում, կրթական ծառայությունների արտահանման համար պայմանների ստեղծում: Համալսարանում ուսումնառության համար օտարերկրացի ուսանողների և ասպիրանտների ներգրավման համալիր միջոցառումների մշակում և իրականացում:

ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ռազմավարական նպատակը

Ուսանողի անհատական և մասնագիտական զարգացման համար պայմանների ստեղծում, ինչը կնպաստի ապագա մասնագետների արդյունավետ հարմարեցմանը հայկական և միջազգային հանրության սոցիալ-մշակութային միջավայրին:

Ռազմավարական խնդիրները

Ուսանողների դաստիարակության քաղաքացիական և մարդասիրական համակարգի ձևավորում, հայրենական և համաշխարհային մշակույթի հաղորդակցում:

Ուսանողական ինքնակառավարման համակարգի կատարելագործում՝ առաջնորդման հատկությունների զարգացման, կորպորատիվ մշակույթի ձևավորման ճանապարհով:

Ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման նպատակով նորաստեղծական միջավայրի ստեղծում:

Ուսանողի աշխարհայացքային գիտելիքների բազմազանության ձևավորման համար պայմանների և նախադրյալների ստեղծում:

Առողջ կենսակերպի նախապահպանություն, ուսանողի ֆիզիկական դաստիարակության համար պայմանների ստեղծում:

Ուսանողների իրավական և սոցիալական պաշտպանության կազմակերպում, հոգեբանական խորհրդատվության համակարգի ստեղծում՝ համալսարանում հարմարավետ դաստիարակչական միջավայր ապահովելու նպատակով:

Մարդասիրական դասախոսական միջավայրի ձևավորում, սովորող երիտասարդների շրջանում հանդուրժողականության սերմանման համար պայմանների ստեղծում և հոգևոր մշակույթի դաստիարակում:

Համալսարանի շրջանավարտի մասնագիտական հարմարման գործընթացի կազմակերպում (շրջանավարտների ակումբ, տվյալների շտեմարան):

Համալսարանի դաստիարակչական միջավայրի վիճակի մշտադիտարկում:

ԿԱՂՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռազմավարական նպատակը

Համալսարանի խնդիրների լուծման համար պատասխանատու մարդկային ներուժի՝ որպես գիտելիքներ, մշակույթ, ավանդույթներ կրողի զարգացում:

Կորպորատիվ մշակույթի, տնտեսական խթանների և սոցիալական երաշխիքների զարգացում՝ աշխատակիցների և սովորողների ավելի ամբողջական ինքնաիրացման, գիտելիքների մշտական համալրման և աշխատանքով ու ուսումնառությամբ առավելագույն բավարարվածության համար:

Ռազմավարական խնդիրները

Մարդկային կապիտալի վերարտադրության և զարգացման ծրագրի մշակում և իրականացում, ինչը կնախատեսի դասախոսական և գիտական գործունեության մեջ ներգրավել համալսարանի առավել շնորհալի, բանիմաց շրջանավարտների, կրթության և գիտության առաջատար աշխատողների, ինչպես նաև վերլուծական աշխատանքն արտադրական օպերատիվ և ռազմավարական որոշումների ընդունման հետ զուգակցող գործնական բնագավառի մասնագետների:

Ակադեմիական փոխանակումների ձևով արտասահմանյան առաջավոր գիտակրթական կենտրոնների հետ տնական կապերի զարգացում.

- համալսարանի դասախոսների և գիտնականների փորձառություն,
- համալսարանի գիտական և կրթական գործունեության մեջ արտասահմանցի մասնագետների և գիտնականների ներգրավում,

- համաշխարհային կրթական նախագծերում և ծրագրերում աշխատակիցների և ուսանողների մասնակցության ընդլայնում:

Պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության պահանջների պարբերաբար նորացում և ներդրում՝ կրթական գործունեությանը նորաստեղծական մոտեցման, հետազոտական աշխատանքներում մասնակցության չափանիշների լույսով:

Աշխատողների մյուս կատեգորիաների (վարչակառավարչական, ուսումնաօժանդակ և տնտեսական) մասնագիտական մակարդակի և որակավորման աստիճանի, տեղեկատվական նոր տեխնոլոգիաների ու գործարար գործընթացների կազմակերպման մեթոդների յուրացման կարողության նկատմամբ պահանջների մեծացում:

Համալսարանի ղեկավար կազմի, կառուցվածքային ստորաբաժանումների, ինչպես նաև դասախոսական և գիտական կադրային պահուստի ձևավորում:

Համալսարանի աշխատակիցների նպատակային սոցիալական աջակցության մեխանիզմների զարգացում.

- աջակցություն առաջատար, գիտական բարձր ակտիվություն ցուցաբերող և կրթական գործունեության մեջ նորաստեղծությունն առանձնացնող, ինչպես նաև տաղանդավոր առանձին դասախոսներին,
- համալսարանական դրամաշնորհների հատկացում երիտասարդ դասախոսներին, գիտական աշխատողներին և սպիրանտներին,
- բնակարանային ծրագրի իրականացում՝ բնակարանների ձեռքբերմամբ, բաժնեմասնակցային շինարարությամբ, համալսարանի աշխատակիցների մասնակցությամբ հիփոթեքային վարկավորման ստացմամբ,
- գործարար բնագավառի հետ արդյունավետ գործակցության ձևավորում՝ սոցիալական խնդիրների լուծմամբ և կադրային քաղաքականության համար լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ ներգրավելու նպատակով:

Աշխատակիցների աշխատանքային իրավունքների և ազատությունների ապահովում, աշխատանքի նպաստավոր պայմանների ստեղծում, նրանց իրավունքների և շահերի պաշտպանություն, ինչպես նաև աշխատակիցների աշխատանքի պաշտպանության պահանջների պահպանման երաշխիքների և սոցիալական ապահովագրության ապահովում:

Սոցիալական ոլորտի օբյեկտների զարգացում, արդիականացում, նորերի կառուցում:

Սոցիալական ենթակառուցվածքի և մարզաառողջարարական օբյեկտի օգտագործման արդյունավետության բարձրացում՝ առողջ կենսակերպի պահպանման և աշխատակիցների ու սովորողների մշակութային մակարդակի բարձրացման համար:

Համալսարանի կառավարման գործում աշխատակիցների և ուսանողների մասնակցության ընդլայնում:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Ռազմավարական նպատակները

Համալսարանի առաքելության արդյունավետ իրականացման համար պայմանների ստեղծում՝ համալսարանի սուբյեկտների գործընկերային հարաբերությունների ամրապնդման ճանապարհով:

Համալսարանի՝ որպես տնտեսագիտական մտքի կենտրոնի, զարգացման քաղաքականության իրականացում:

Համալսարանի կառավարման համակարգի զարգացում՝ մասնագիտական գործունեության և աշխատակիցների ու սովորողների սոցիալական պայմանների բարելավման համար:

Ռազմավարական խնդիրները

Համալսարանի ռազմավարական զարգացման ծրագրի իրականացման աղյուսակետ կառավարման կազմակերպում:

Համալսարանի կառուցվածքի հարմարեցում ռազմավարական խնդիրների լուծմանը:

Համալսարանի կառավարման մարտավարական խնդիրների լուծման նպատակով նրա ռազմավարական զարգացման ծրագրի միավորում՝ միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորման և հաշվեկշռված ցուցանիշների համակարգման միջոցով:

Համալսարանի կառավարման համակարգի արդիականացում՝ ISO 9000 միջազգային ստանդարտի պահանջներին համապատասխան որակի կառավարման սկզբունքների հիման վրա:

Համալսարանի բոլոր սուբյեկտների, ինչպես նաև գործունեությանն առնչվող սվյալների աղբյուրները և տեղեկատվական հոսքերը միավորող կորպորատիվ տեղեկատվական համակարգի և ցանցային ենթակառուցվածքի զարգացման մակարդակի գործառնությանն հնարավորությունների մեծացում՝ շնորհիվ ժամանակակից ծրագրային և տեղեկատվական միջոցների կիրառության:

Կառավարման կորպորատիվ ինտեգրված ավտոմատ տեղեկատվական համակարգի (ԻՍՏՀ) և տեղեկատվական-հաղորդակցային ցանցի գործառնությունն ապահովող նորմատիվաիրավական փաստաթղթերի մշակում:

Համալսարանի արդյունավետ կառավարման ապահովման նպատակով կադրերի, ֆինանսական, տեղեկատվական, նյութատեխնիկական ռեսուրսների օգտագործումը կանոնակարգող նորմատիվային փաստաթղթերի կատարելագործում:

Ստորաբաժանումների և առանձին աշխատակիցների նախաձեռնությունը խթանելու, ինչպես նաև աշխատակիցների և սովորողների ստեղծագործական կարողություններն ու մասնագիտական հնարավորություններն առավելագույնը գործադրելու պայմանների ստեղծում:

Կոլեկտիվում աշխատանքի արդյունքների մեջ ընդհանուր շահագրգռվածության խթանման, գործունեության բոլոր բնագավառներում համալսարանի շահերի պաշտպանության մթնոլորտի ստեղծում:

Վարչակառավարչական անձնակազմի բոլոր կատեգորիաների աշխատակիցների որակավորման բարձրացման համակարգի ստեղծում:

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ռազմավարական նպատակները

Կայունացման բյուջեից անցում զարգացման բյուջեի՝ ուղղորդված կրթական և գիտական ծառայությունների ծավալի մեծացմանը և որակի բարձրացմանը, ծախսերի օպտիմալացման պայմաններում նորաստեղծական գործունեության զարգացմանը:

Պրոֆեսորադասախոսական կազմի, կադրերի, գիտաշխատողների, կառավարչական օղակի մենեջերների պահպանում և ներհոսքի ապահովում, համալսարանի աշխատակիցների եկամուտների մաքրակի նշանակալից բարձրացման պայմանների ստեղծում:

Ռազմավարական խնդիրները

Համալսարանի համախմբված բյուջեի ձևավորման և կատարման վերահսկողության կատարելագործում:

Համալսարանի ստորաբաժանումների (ամբիոններ, ֆակուլտետներ, մասնաճյուղեր և այլն) գործունեության վերջնական արդյունքների համար ինքնուրույնության, շահագրգռվածության և պատասխանատվության բարձրացումն ապահովող ֆինանսատնտեսական մեխանիզմների զարգացում:

Հեռանկարային ուղղություններով ռեսուրսների վերաբաշխման վերաբերյալ որոշումների ժամանակին ընդունման համար համալսարանի եկամուտների մակարդակի միջնաժամկետ ֆինանսատնտեսական կանխատեսման համակարգի զարգացում՝ ըստ գործունեության առանձին տեսակների:

Տեղեկատվական ժամանակակից տեխնոլոգիաների հիման վրա «իրական ժամանակի» ռեժիմում համալսարանի եկամուտների և ծախսերի մշտադիտարկման համակարգի ստեղծում:

Մեկ սովորողի հաշվով եկամուտ-ծախսեր հարաբերության հիման վրա մասնագիտությունների, լրացուցիչ կրթության ծրագրերի կտրվածքով տրամադրվող կրթական ծառայությունների տնտեսական

պլանավորման և արդյունավետության մշտադիտարկման համակարգի ներդրում:

Տրամադրվող կրթական և գիտական ծառայությունների նկատմամբ պահանջարկի ժամանակավոր անկման դեպքում համալսարանի գործունեության հեռանկարային ուղղություններում ռեսուրսային ապահովման և տնտեսագիտական կադրերի պատրաստման բնագավառում համալսարանի առաջատար դիրքի ավանդական ուղղությունների պահպանման համար ֆինանսական պահուստների և հիմնադրամների ստեղծում:

Տրամադրվող կրթական ծառայությունների գնագոյացման մեխանիզմների կատարելագործում՝ մարքեթինգային մշտական հետազոտությունների և մեկ սովորողի հաշվով ծախսերի հաշվառման հիման վրա, սովորողների հետ պայմանագրային հարաբերությունների գրավչությունը մեծացնող գեղչերի, արտոնությունների, վարկավորման համակարգի զարգացում:

Համալսարանի ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետ նորմատիվային հենքի զարգացում:

Համալսարանի կառավարման համակարգում հանրային մասնակցության դերի բարձրացում և ակտիվացում:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՆՔ

Ռազմավարական նպատակը

Համալսարանի ռազմավարական զարգացման ծրագրերի իրականացումն ապահովող նյութատեխնիկական հենքի զարգացում և տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացում:

Ռազմավարական խնդիրները

Մինչև մասնագետների պատրաստման համաշխարհային մակարդակին համապատասխանելը՝ ուսումնալսողապատրաստողային հենքի զարգացում և կատարելագործում:

Համալսարանի մեծացող պահանջմունքների բավարարման համար տեխնիկական օբյեկտների, ինժեներական ցանցերի և հաղորդակցությունների զարգացում: Գոյություն ունեցողների վերակառուցման և նոր օբյեկտների շինարարության միջոցով մարզաառողջարարական և մշակութային ենթակառուցվածքի զարգացում:

Նյութատեխնիկական հենքի շահագործման ռացիոնալ ռեժիմի ապահովում՝ էներգախնայող տեխնոլոգիաների կարևորմամբ:

Ըստ աշխատանքի, ուսուցման պայմանների ռեժիմի՝ նորմատիվային պահանջների ապահովում:

Համալսարանի աշխատակիցների մեջ տարածքների և սարքավորումների պահպանման և արդյունավետ օգտագործման շահագրգռվածության և պատասխանատվության ձևավորում:

Համալսարանի ֆիրմային ոճն արտացոլող՝ համալսարանի ճարտարապետական և լանդշաֆտային ձևավորման բարելավում: